

## Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

### ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԼԻ ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՇԵՂԿՈՍԻ ԳՈՐԾՈՒ- ՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1920 Թ. ՆՈՅՆԱՐԵՐ-1921Թ. ՇՈՒՆԿԱՐԻՆ

1920 թ. թուրք-հայկական պատերազմը հայոց նորագույն պատմության ողորդական էջերից է: Պարտվելով այս պատերազմում՝ հայերը կորցրեցին ոչ միայն հայկական տարածքները մեկ պետության մեջ միավորելու բացառիկ ենարավորությունը, այլև նորանոր տարածքներ զիջեցին թուրքերին: Տվեցին մեծաթիվ մարդկային զոհեր: Կրեցին հսկայական նյութական վնասներ: Առանձնապես մեծ ողորձություն ապրեց Ալեքսանդրապոլի գավառի բնակչությունը, որը վեց ամիս իր վրա կրեց թուրքական դաժան օկուպացիոն ուժերի քուր սարսափները: Ավելին, հայերին քուր միջոցներով բնաջնջելու և նրանց վերջին ունեցվածքը թալանելու թուրքական քաղաքականությունն այսանդ զուգակցվեց հակահեղափոխության դեմ պայքարելու եամար սեփական ժողովրդին տեղորի ենթարկելու և «եամուռն այդ նույն ժողովրդի հավասարության»՝ նրա ունեցվածքը թալանելու բոլշևիկյան դործելակերպի եետ: Ալեքսանդրապոլի անկման, բնակչության խուճապի, Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանության եաստաման հարցերը հայ պատմագրության մեջ հաճախ մեկնաբանվում եմ որպես տեղի բնակչության բնավորության եետ կապված երևույթներ: Այսպես, օրինակ, Հակոբ Տեր-Հակոբյանը գրում է. «Կարսի անկումն առաջ բերեց հուսանաւորություն և խուճաւ ոչ սրայն գորքի, այլ ժողովրդային լայն դանպվածներու մեջ: Ալեքսանդրապոլի շրջանի ժողովուրդը, որ միշտ ալ թույլ կազմակերպված է և միշտ ալ տրամադիր տաճիկներու պանանջներուն ընդստաջ ելքալ, պատրաստություններ կտեսներ անջաա բանակցություններ վարելու և իր կաշին վերկելու եամար: Կարսի ե Ալեքսանդրապոլի միջև գանված տարածության վրա ապրող եայ գյուղացիությունն արդեն սրատրաստություններ կանսներ գաղթելու, հեռանալու, և այդ երևույթը շաա բացասական ազդեցություն ունեցավ թե գորքի, թե կառավարական շրջաններու և թե առեասարակ դիմադրական ոգու վրա»<sup>1</sup>:

Մինչդեռ կարծում եմք, բնդիակառակը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, երաժարվելով Հայասանի խորհրդայնացումից և միաժամանակ իրական ուժ չունենալով կանպեցեմել թուրքական առաջխաղացումը, Ալեքսանդրապոլի և գավառի բնակչությանը թողեց անպաշտպան՝ թուրքական ահեղ վտանգի դեմ եանդիման:

Բախուսի քմահաճույթին մնացած բնակչությունը ստիպված եղավ «աղ ու հացով» դիմավորել իր թշնամուն, իակ Ալեքսանդրապոլի բոլշևիկները, ձգանլով բնակչության փրկությանը թուրքական սարսափներից, վերջիններիս համաձայնությամբ այստեղ հոչակելով խորհրդային իշխանություն՝ դարձան թուրքերի ձեռքի գործիքը եարագաա ժողովրդին թալանելու ե կոտորելու գործում:

Ալեքսանդրապոլի բոլշևիկյան Հեղկոմի գործունեությունը ևս եայ պատմագրության մեջ դիտված է որպես տեղական երևույթ, որպես Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպության լուրջ սխալ, որը, իրը, ազնվարար ընդունվել է նրանց կողմից և շտկվել: «Ալեքսանդրապոլի կազմակերպությունը, գրում է Ս. Կարապետյանը, լուրջ սխալ կասարից քեմալական բանակը համարելով եեղափոխական: Նա 1920թ. նոյեմբերի 17-ին ստեղծեց Հեղկոմ և այն եայաարաբեց Մովեսական Հայասանի Հեղկոմ, երբ Հայասանում դեռ սովեական կարգեր չէին հաստատվել: Հեղկոմն անգիտակցարար սկսեց գործակցել թուրք ռեակցիոն, եակասովետական հրամանատարության հետ: Թուրքերն, իեարկե, փորձ արեցին Հեղկոմն օգաագործել իրենց եակասովետական քաղաքականությունը կիրառելու եամար, բայց թուրքերի վայրագությունները աեսնելով՝ Հեղկոմը շուտով եամոզվեց, որ ինքը խաբված է, սկսեց շտկել իր սխալները: Այդ գործում նրան օգեեց Հայաստանի Հեղկոմը»<sup>2</sup>:

Ալեքսանդրապոլի Հեղկոմի գործունեությունը նույնիսկ եամարվել է աեղի առանձին

1. Տե՛ս, Հ. Տեր-Հակոբյան, Հայասանի վերջին աղեաը, կ. Պոլիս, 1921թ., էջ 116:

2. Տե՛ս, Ս. Կարապետյան, 1920թ., եայ-թուրքական պատերազմը և Մովեսական Ռուսասանը, Երեան, 1965թ., էջ 50:

բուլճարի սխալի արդյունքը: «Թուրքական գույքիչնդի կողմից օկուպացված քաղաքում այս հեղկումի գործունեությունը լուրջ սխալ էր, եետևանք Ալեքսանդրապոլի բուլճարի մի խմբի՝ թուրքերի հետ համերաշխ գործելու օպորտունիստական տակտիկայի»,- գրում է Գ. Ղարիբջանյանը<sup>3</sup>: Նմանօրինակ տեսակետների համար հիմք է ծառայել Ալեքսանդրապոլի գրավումից հետո կազմակերպության 1921թ. ապրիլյան առաջին կոնֆերանսի որոշումը, որով Ալեքսանդրապոլի Հեղկումի գործունեությունը թուրքական օկուպացիայի շրջանում համարվել է սխալ և վարկարեկիչ խղճաբեկիչ իշխանության համար<sup>4</sup>:

Մինչդեռ Ալեքսանդրապոլի Հեղկումի գործունեությունը մասնակի երևույթ չէր, այլ քեմալականների կողմից վարպետորեն օգտագործված իրողություն Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում: Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով միջազգային հարաբերություններում առաջացած հակասությունները որոշակի ձևով արտահայտվել էին նաև Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում, որտեղ Հայաստանի ապագայի վերաբերյալ ձևավորվել էր երկու եիմնական դիրքորոշում: Հայաստանի Հանրապետության կուսակառուցությունը իր եույսերը կուսվել էր Անտանտի հետ, որի օգնությամբ պետք է ամրապնդվեր պետությունը, և ընդլայնվի տարածքները: Հնրլիմալիք մի շարք ուժեր և հասկացված բուլճարից, երկրի փրկությունը տեսնում էին Հայաստանի խորհրդայնացման մեջ: Այս երկրորդ քաղաքական եոսանքն իրեն դրսևորել էր դեռևս 1920թ. մայիսի իրադարձությունների ժամանակ, երբ Ալեքսանդրապոլում և մի շարք այլ վայրերում եոչակվել էր խորհրդային իշխանություն: Դաշնակցական կառավարությունը, որ մինչ այդ ավելի եանդուրժող էր բուլճարի նկատմամբ, դիմել էր բռնությունների՝ գնդակահարելով մի քանիսին և ձերբակալելով մյուսներին: Խորհրդային Ռուսաստանը, չցանկանալով առիթ աալ Անտանտին ռազմական գործություններ սկսել Կովկասում, Հայաստանի խորհրդայնացման էր ուզում հասնել ռանակցությունների միջոցով՝ զգուշանալով կարմիր ռանակը այստեղ մտցնելուց:

Մակայն Հայաստանի Հանրապետության կուսակառուցությունը, ճիշտ չկողմնորոշվելով ստեղծված միջազգային իրողության պայմաններում, չկարողանալով օգտագործել Հայաստանի խորհրդայնացման խաղաքարան ընդդեմ քեմալական Թուրքիայի, ենարավորություն է ընձեռում վերջինիս՝ այն օգտագործել իր դեմ: Արդյունքում խորհրդահայկական ռանակցություններն ավարտվեցին անարդյունք, իսկ միաժամանակ ընթացող խորհրդա-թուրքականը՝ դաշինքով, որը թուրքերին ենարավորություն տվեց սկսել թուրք-հայկական պատերազմը և եանդես գալ որպես Հայաստանի «ազատարար» դաշնակցական կառավարությունից՝ ստիպելով Խորհրդային Ռուսաստանին գնալ առավելագույն զիջումների: Մասնավորապես Ալեքսանդրապոլի գրավումը ռազմական տեսակետից որևէ անբարժեշտություն չէր ներկայացնում, քանի որ սրաչ այդ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել էր իր պարտությունը և կնքվել էր զինադադար, որի եամաձայն թուրքերը գրավելու էին միայն Ալեքսանդրապոլի բերդն ու կայաքանը: Մակայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իրական ուժ չունենալով կանգնեցնել թուրքական արշավանքը, մերժելով Խորհրդային Ռուսաստանի՝ Հայաստանի խորհրդայնացման և Թուրքիայի հետ մոր զինադադարի պայմանները, ենարավորություն է տալիս նրան շարունակելու Հայաստանի «ազատագրման» գործը:

Անպուշտպան մնացած Ալեքսանդրապոլի գավառը կարճ ժամկետում օկուպացվում է թուրքերի կողմից: Ահա այս պայմաններում Ալեքսանդրապոլի բուլճարից, փորձելով փրկել թախտի քեմալային մնացած ռանակությունը թուրքական սարսափներից, եամաձայնում են Ալեքսանդրապոլում խղճաբեկիչ իշխանություն եոչակելու թուրքերի առաջարկին: Ինչպես Հայաստանի, այնպես էլ Ալեքսանդրապոլի բուլճարից, դեկավարվելով Ռուսաստանի կոմունիստական կուսակցության որդեգրած արևելյան քաղաքականության սկզբունքներով, բնականաբար խարվում են այդ քաղաքականությունը իրենց ազգային շահերի համար օգտագործող քեմալականների կողմից: Եվ մինչ 1920թ. դեկտեմբերի 2-ին

3. Տե՛ս, Գ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության համար մղվող պայքարում, Երևան, 1955թ., էջ 465:  
 4. Տե՛ս, ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Ժ. 3, ց. 1, ք. 46:

Հայաստանի դաշնակցական կառավարությունը կկատարեր անխուսափելի՝ կընդուներ խորերդային իշխանությունը, թուրքերն Ալեքսանդրապոլի գավառում իրենց կողմից ստեղծված խորերդային իշխանության մարմինների միջոցով «օրինական» կերպով իրականացնում էին եայ բնակչության թալանն ու կոտորածը: Այս ամենը ասում է մինչև 1921 թ. եռմսվարի 25-ը, երբ Ալեքսանդրապոլի Հեղկոմը, զգալով իր խայտառակ դերը, վսյր է դնում լիազորությունները՝ չփսրկարեկելու եամար խորերդային իշխանությունը: Սակայն, ինչպես Ալեքսանդրապոլում խորերդային իշխանության եռչակումը չփրկեց տեղի բնակչությանը թուրքական սարսափներից, այնպես էլ Հայաստանում խորերդային կարգերի եռչակումը չստիպեց թուրքերին անմիջապես վերադարձնել «Հայաստանի խորերդայնացման եամար» մղված պատերազմում գրավիած եայկական տարածքները: Թուրքերն այս անգամ արդեն ձևացնելով, թե եետաքրքրվում են Հայաստանում եեղափոխության կարգացմամբ, դրդում են Հայաստանի կոմունիստական կառավարությանը՝ առափել դաժան վերաբերմունք ցույց աալ դաշնակցականների նկատմամբ, որպեսզի կառավարության փոփոխությունը չնկատվի իբրե «պարզ ձևի փոփոխություն»:

Դժբախտարար Հայաստանի կոմունիստական կուսակցությունն էլ, որն իր պաամական միսիան էր եամարում օժանդակել Թուրքիայում եեղափոխության գարգացմանը, Ալեքսանդրապոլի Հեղկոմի նման՝ թուրքերին օրինակ ծառայելու եամար անցնում է դաշնակցականների նկատմամբ դաժան տեռորի: Սա կամաց-կամաց երկիրը տանում է թուրքերի կանխորոշած քաղաքացիական պաաերազմի ույիով՝ լրացնելով նրանց կիսատ թողածը Հայաստանի չգավթված մասերում և երկարածգելով Ալեքսանդրապոլի գավառի օկուպացիան: Ալեքսանդրապոլի բուշկերների գործունեության եերթականությունն անգամ վկայում է այն փասար, որ նրանք, ձգաելով Հայաստանի խորերդայնացմանը, իրականացնում էին քեմալական Թուրքիայի եասուկ մշակած քաղաքականությունը, այն է՝ Հայաստանի խորերդայնացման պատրվակն օգաագործելով՝ գրավել եմարավսրին չափ շաա հայկական տարածքներ և, ամենավերջին եմարափորությունն օգտագործելով, թալանել և կոտորել եայ բնակչությանը:

Դեռևս նոյեմբերի 5-ին բուրս գայով բանսփց՝ թուշկերները ծավսլել էին լայնամաաւտար կուսակցական աշխաանք և քարոզչություն ընդդեմ դաշնակցության և պաաերազմի, կուսանելով չկովել եղբայր թուրքերի դեմ, չեեռանալ քաղաքից և, վերջապես, խուճասի չմանվել, քանի որ եկողները ոչ թե «թալանչիներ և մարդասպաններ են, ալ իրենց փթկիչները՝ դաշնակ շաաագործողներից»<sup>5</sup>:

Հայաստանի բանվորներին, զինվորներին, գյուղացիներին ուղրված մի այլ կոչում նրանք հորդորում են «փախչել, մնալ անդերում, օգնել իրենց՝ խոսաամալով ամեն ջանք գործադրել փրկելու Հայաստանի բանվորներին և գյուղացիներին»<sup>7</sup>:

Նոյեմբերի 15-ին բուշկերները Ալեքսանդրապոլի և շրջանի բնակչությանը կոչ են անում անցնել դաշտային աշխաանքների՝ իրենք եավաաալով և գյուղացիներին էլ եավաաացնելով, թե նրանց անվաանգությունը ապաեովված է. և որ նրանցից խլված բուլր սայերը և եգները կվերադաքծվեն, եթե նրանք աշխաանեն<sup>8</sup>:

Ալեքսանդրապոլի կոմունիսաները բախսաի քմաեաճույթին մնացած ժողովրդին եավատացնում են, թե խորերդային կարգերի եասաատումը կփրկի նրանց, քանի որ թուրքերի նպաաակը միայն կառավարության տապալումը և բանվորագյուղացիական իշխանության եասաատումն է<sup>9</sup>:

Այս մտայնությունը արմատավորելու նպաաակով նոյեմբերի 13-ին թուրքերն ու բուշկերները եամաաեղ միսինգ են երավիրում, որաեղ որոշում են քաղաքում ու գավառում եռչակել խորերդային իշխանություն: Մրտրսգն ընդունում է բանաձև և ողջույնի եեռագիր՝ ուղրված թուրքական կոմունիսական կուսակցությանը, որտեղ համոզվածություն էր

5. Տն՝ ՀՀ ՀԶԿԳ ԿՊԱ, Ֆ. 1022, ց.3, գ.270, ք.4-6:  
6. Տն՝ ՀՀ ՀԶԿԳ ԿՊԱ, Ֆ. 1022, ց.2, գ.189, ք.2:  
7. Տն՝ ՀՀ ՀԶԿԳ ԿՊԱ, Ֆ. 4033, ց.4, գ. 127, ք.3:  
8. Տն՝ ՀՀ ՀԶԿԳ ԿՊԱ, Ֆ. 1022, ց.3, գ. 127, ք.1-2:  
9. Տն՝ ՀՀ ՆՊ ԿՊԱ, Ֆ. 144, ց.3, գ. 45, ք.7:

հայտնվում, որ «միայն երկու եարևան ժողովուրդների պրովետարների միավորումը և նրանց եամատեղ աշխատանքը կերաշխավարիբ հաջողությունը մեծ պայքարում և համաշխարհային իմպերիալիզմի վերջնական տապալումը»<sup>10</sup>:

Ալեքսանդրապոլի իշխանությունները Լևոն Սարգսյանի գլխավորությամբ փորձում են խաթարել թուրքերի և թուշկիկների եարարերությունները, բայց դա նրանց չի հաջողվում: Թուրքերը ընդ գործերը կարգավորում են թուշկիկների եետ՝ եեղինակագրկելով կոալիցիոն իշխանությունը: Բուշկիկների եեղինակությունը բարձրացնելու նպատակով «թիկունքն ապանովելու» և այլ ձևական պաանաարանություններով նրանք գերի են վերցնում եայ տղամարդկանց և կոմունիստների մի ակնարկով ազատում նրանց: Ալեքսանդրապոլի թուշկիկներին ոգևորելով կեղծ իշխանության պատրանքներով՝ թուրքերը կամաց-կամաց մոտենում են խորերդային իշխանության եռչակամանը: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների եետ նոր զինադադար կնքելու բանակցություններն արդեն զուգակցվում են թուշկիկների եետ ընթացող բանակցություններով<sup>11</sup>:

Եվ, վերջապես, նոյեմբերի 17-ին թուշկիկների և թուրքերի փոխադարձ եամաձայնությամբ Ալեքսանդրապոլում ու զավառում եոչսկվում է Հեղկոմ, որի նախագան և ներքին գործերի կոմիսար է նշանակվում Մաթևոս Տեր-Գրիգորյանը (Արծվիկ), օգնականներ՝ Նաեազետ Կուրդինյանը, Երվանդ Հայրապետյանը և Ներսիկ Ստեփանյանը, ֆինանսների կոմիսար՝ Արաաշես Տեր-Սարաիբոսյանը, առողջապաեությունը՝ Կ. Միրզոյանը, գավառի կոմիսար՝ Աղասի Վարոսյանը<sup>12</sup>:

Նորաստեղծ Հեղկոմը շտապում է ողջույնի եեռագիր ուղարկել Թուրքիայի կոմունիստական կուսակցությանը՝ սասանալով սրասապիուսն շնորեավարանք<sup>13</sup>:

Ի դեպ, սկզբնական շրջանում թուրքերն Ալեքսանդրապոլի Հեղկոմին սահալում են եանդես գալ որպես Հայաստանի Հեղկոմ՝ նպատակ ունենալով իրենց օկուպացիոն ոեժիմը տարածել ուղջ Հայաստանի վրա: Իսկ Հայաստանի խորերդայնացումից եետո փորձում են միյանց եակադրել Հայեեղկոմն ու Ալեքսանդրապոլի Հեղկոմը: Արդեն դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հեղկոմի նախագան Ս. Կասյանը և ՌևՖՍՀ լիագոր Լեգրանը Մոլիվանուն եեռագլում են. «կուսակցական կարգապաեության ուժով գզուացրեք Ալեքսանդրապոլի Հեղկոմին իրեն ինքնագլուխ Հայաստանի Խորերդային Հանրապետության Հեղկոմ անվանելու անթույլատրելիության առթիվ»<sup>14</sup>:

Միայն 1920թ. դեկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլի Հեղկոմն եայտարարեց, որ վերանվանվում է Ալեքսանդրապոլի գավառային Հեղկոմ և եեթարկվում է Հայեեղկոմին<sup>15</sup>:

Ինչպես արդեն նշել եեք, նրանց մեջ գործելակերպի և նպատակների որևէ տարրերություն չկար: Միակ տարրերությունն այն էր, որ Ալեքսանդրապոլի Հեղկոմը գործում էր՝ թուրքական օկուպացիայի պայմաններում: Թուրքերն, իեարկե, խորերդային իշխանությունն Ալեքսանդրապոլում ճանաչեցին այնքանով, որքանով աներաժեշտ էր դա իրենց մտադրությունները իրականացնելու եամար: Ալեքսանդրապոլի Հեղկոմի վարչական ապարատի առանձին, մասնավորապես, լուսավորության, սոցապաեովության, վիճակագրության, պարեմավորման, ֆինանսական, փոստ-եեռագրական բաժինները չգործեցին կամ էլ մասամբ գործեցին՝ կյանքում իրական պայմաններ չիենելու պատճառով: Գործեցին միայն իշխանության այն մարմինները, որոնց միջոցով թուրքերն իրականացրին բնակչության տեռորն ու թալսնը: Մասնավորապես ներքին գործոց բաժինն ու Արտակարգ եանձնաժողովը իսկական պատուեաս էին դարձել բնակչության գլխին: Խորերդային իշխանության իրենց ծառայեցնելու նպատակով թուրքերը քաղաքում և գյուղերում ստեղծում են իշխանություն մարմինների լսյն ցանց՝ քաղաքի և քաղաքամասերի, գավառի և գավառամասերի կոմիսարներ, քաղաքային և գավառային միլիցիա: Գավառամասերի կոմիսարներն իրենց եերթին գյուղերում ընտրում են գյուղական կոմիսարների: Ա.Ս. որ

10. Տե՛ս, ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, Ֆ. 1022, ց.2, գ. 188, ք.1:

11. Տե՛ս, ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, Ֆ. 4033, ց.3, գ. 1, ք.9:

12. Տե՛ս, ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, Ֆ. 4033, ց.4, գ. 127, ք.165-166:

13. Տե՛ս, ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, Ֆ. 1022, ց.3, գ. 323, ք.1-2:

14. Տե՛ս, ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, Ֆ. 4033, ց.2, գ. 1157, ք.13:

15. Տե՛ս, ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, Ֆ. 4033, ց.2, գ. 1180, ք.1:

գյուղական իշխանության մարմինների ընտրությունները կատարվում էին թուրքական երամսնատարության գիտությանը և եամսաձայնությանը, երևում է գուլտոալին կոմիսարների զեկուցումներից: Այլապես նրանք չէրս ունենա իրենց հետ մանդատներ և ասկյարներ, առանց որոնց ենարավոր չէր մտնել թուրքերի կողմից գրավված գյուղերը: Չեկուցումներից երևում է նաև, որ այդ մարդիկ խաղալիք էին թուրքական երամսնատարության ձեռքին: Տարվսրալ կեղծ իշխանության պատրանքներով՝ նրանք չէին տեսնում այն ռեալ իրականությունը, որի պայմաններում ապրում էին: Այլապես, գտնվելով թուրքական օկուպացիայի պայմաններում, չէրս պահանջի թուրքերից ենթարկվել իրենց և չէին զարմանա, որ վերջիններս չեն ենթարկվում, թալանելով են գրադվում և նույնիսկ ամեանգատացնում են ընտկչությունը: Ալիքսանդրասպուլի քաղաքի կոմիսարին ուղղված քաղաքամասի կոմիսար Պետրոսյանի զեկուցումում կարդում ենք. «Երբորդ անգամ եայանում են Չեզ, որ կարգ պահպանելու համար իմ տրամադրության ասկ ճշանակված ասկյարները ինձ և են ենթարկվում, նրանք խուզարկություններ են անում, տներ են մտնում, այլուր, փայտ են բառնում և այլ պահանջներ են դնում և միշտ ամեանգատացնում են խաղաղ քաղաքացիներին, որի համար խնդրում են Չեզանից դիմել ուր որ եարկն է, ամմիջապես վերջ աալու այս անկարգություններին»<sup>16</sup>:

Նմանօրինակ խնդրով ներքին գործոց կոմիսարին է դիմում 1920թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրասպուլի գավառի կոմիսարը<sup>17</sup>:

Իրականում թուրքական երամսնատարությունը, ասկյարներ տրամադրելով և զինելով Հեղկոմին ու նրա բաժիններին, ոչ թե նսյասակ ուներ քաղաքում ու գավառում կարգ ու կանոն հաստատել, կամ թե խորհրդային իշխանությունն ամրապնդել, այլ խորհրդային իշխանության այդ մարմինների միջոցով անտորի ու թալանի իր քաղաքականությունն իրականացնել: Դժբխտաբար թուրքերի հաշիվները միշտ և ն դուրս գալիս: Ստեղծված իշխանության մարմինները սեփական ժողովրդին թալանելու և անտորի ենթարկելու գործում փորձում են գերազանցել մեկը մյուսին: Այսպես, 2-րդ գավառամասի կոմիսար Ֆրանց Կալսլայանը, առանց գափսոսի կոմիսարին տեղեկացնելու, ձերբակալում և Արասկարգ եանձ-նաժողովի կոմիսարին կամ աաճկաց կառավարությանն է ուղարկում բազմաթիվ եայ ընա-կիչների, այդ թվում նույնիսկ իր կուսակցական ընկերներին<sup>18</sup>: Նման գործողությունները դադարեցնելու՝ պալսոսի կոմիսարի պահանջին, նա պաասսլանում է, որ ինքն աշխատում է ձերբակալել բոլոր եակաեեղափոխականներին և պաաժել, իսկ թե ում ձեռքով՝ դա կարևոր չէ<sup>19</sup>:

Ի դեպ, եակաեեղափոխականների դեմ սյայթարում ոչ սր չափանիշ չկար: Մի կուսակցականի մասնացույց անելը բավական էր բազմաթիվ անմեղ մարդկանց ձերբակալելու և առանց մեղադրանքի Արտակարգ եանձնաժողովի նկուղները նեաելու: Առանձին դեպքերում, ինչպես, օրինակ, վարվում էր 2-րդ գավառամասի կոմիսարը. շրջանցելով Հեղկոմին, նրանց եանձնում էին ուղղակի թուրքերի ձեռքը: Փաստորեն, իրենց կողմից ստեղծված խորհրդային իշխանության մարմինների օգնությամբ թուրքերն իրականացնում էին եայերին բնաջնջելու իրենց քաղաքականությունը: Մինչդեռ Ալեքսանդրասպուլի կոմունիստական կուսակցության կոմիտեին, արբեցած եակաեեղափոխության դեմ մղված սյայթարում իր եաջողություններով, 1920 թ. դեկտեմբերի 20-ին դիմում-բողոք է ուղարկում Հայաստանի կոմունիստական կուսակցությանը դաշնակցականների նկատմամբ վարած մեղմ քաղաքականության համար, պահանջում է հանուն Հայաստանի ընչագուրկների՝ խիստ միջոցներ ձեռնարկել դաշնակցականների նկատմամբ՝ մասնանշելով նրանց անդը՝ «արասկարգ եանձնաժողովի նկուղը»<sup>20</sup>: Ի դեպ, նմանատիպ մի շարք եեռագրերով Հայաստանի Հեղկոմին մեղադրում է նաև Ալեքսանդրասպուլում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Միլիվանին<sup>21</sup>:

16. Տե՛ս, ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Ֆ. 144, ց. 1, գ. 14, ք. 16:

17. Տե՛ս, ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Ֆ. 144, ց. 1, գ. 27, ք. 12:

18. Տե՛ս, ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Ֆ. 144, ց. 1, գ. 1, ք. 26:

19. Տե՛ս, ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Ֆ. 144, ց. 1, գ. 1, ք. 41:

20 Տե՛ս, ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Ֆ. 144, ց. 2, գ. 19, ք. 4:

21. Տե՛ս, Մ. Ալիխանյան, Խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազաաագրման գործում (1917-21 թ.թ.), Երևան, 165, էջ 345:

Այս ամենն, հոարհե. տեղի էր ունենում Կարաբեքիր փաշայի ծրագրով, որով նա այնպիսի տպավորություն էր ստեղծել, թե իբր ինքը հեղափոխական է, իսկ կատարվող թալանն ու սպանությունները ռեակցիոն ուժերի ձեռքի գործն է: Իր կառավարած հանցագործությունները զցելով իբր թե ռուսություն ունեցող հակառակ ռուսների վրա բուլշևիկներից պահանջում էին անողորմ վերաբերմունք ցուցաբերել դաշնակցականների նկատմամբ: Թուրքերի այս մտածված քաղաքականության մասին է վկայում թուրքական Ազգային մեծ ժողովի կառավարության Արտաքին գործերի կոմիսար Ահմեդ Մուխտարի՝ 1920թ. դեկտեմբերի 19-ի նոտան՝ ուղղված Հայաստանի արտգործոցին Բեկզադյանին: «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը, սափում է նոտայում, մեծ ուրախությամբ է դիմավարել Հայաստանում արևմտյան, մասնավորապես անգլիական ինստիտուտների ծառայության մտած դաշնակցների իշխանության անկումը և նրանց փոխարեն կոմունիստների գործի գլուխ անցնելը, որոնք կսչված են առանձնելու Ռուսաստանի և Թուրքիայի ժողովուրդների միջև անկեղծ կուսակցական սրբաբանականություն: Այս բանը մեր գոեմուսականությունը անգամ մը ավելացրած է: Արա ամենամեծ ապացույցն այն է, որ մենք Ալեքսանդրապոլ մտնելուն պես գործի երավիրեցինք այնպեղի կոմունիստներին, ղեկ այն ժամանակ, երբ տակավին Հայաստանին մեջ դաշնակցականությունը կեցած էր: Սակայն մինչև երբևէ թերևս տակավին մերքին կայունությունը ամրացած չլինելու պատճառով Հայաստանի կառավարության փոփոխությունը, պարզ ձևի փոփոխություն լինելով, դաշնակցների դեմ երկմական միջոցներ ձեռն առնելու ու կոմունիստական սկզբունքներով կառավարելու մտախն ոչ մեկ լուրջ ապացույց և ոչ մեկ եստույկ անդեկություն չկարողացանք ձեռք թերել»<sup>22</sup>:

Ալեքսանդրապոլի բուլշևիկները, ձգտելով ենդափոխականացնել թուրքական թանակը սեփական օրինակով և գործնականորեն ապացուցելու համար իրենց հավատարմությունը ենդափոխությանը, լինում են անօրինակ ռեպրեսիաների: 1920թ. դեկտեմբերի 20-ից մինչև 1921թ. հունվարի 10-ը Ալեքսանդրապոլում ծառայողական գործուղման մեջ զանվող Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի մախագահի տեղակալ Հ. Ամառունին հանձնաժողովի մախագահ Ալվազովին ուղղված իր զեկուցագրում գրում է. «Ալեքսանդրապոլի Արտակարգ հանձնաժողովն անցել է բոլոր սահմանները: Վերակազմավորել Արտակարգ հանձնաժողովը և դատի տալ այդ սաղիստներին չեմ համարձակվում, վախենում եմ թուրքերից: Դրության անբը թուրքերն են: Նրանք տարել են և տանում են ամեն ինչ: Աներաժեշտ է ազդել Մոսկվայի միջոցով: Պահանջում են զնդակահարել դաշնակցականներին, դայց ախը դաշնակցականներ չկան»:

Հատկանշական են այս զեկույցի վերջին տողերը, որոնցից պարզ երևում են թշնամի զտնելու մույն մորուցքը, մույն գործելակերպը: «Այստեղ կան դեմեկիմյաններ, - գրում է նա վերջում, - նրանք իմ եսկողություն տակ են: Թուրքերը խանգարում են նրանց ձեռք տալ, նրանցից մեկը մույնիսկ աշխատել է Արտակարգ հանձնաժողովում»<sup>23</sup>: Հակաենդափոխության դեմ պայքարն ուղեկցվում է թանագրավումներով, որոնք կատարվում էին իբր ժողովրդին սովից փրկելու համար: Ալեքսանդրապոլի զավատային կուսկազմակերպությունների առաջին կոնֆերանսի ապրիլի 9-ի միսաում մախկին Հեղկոմի վերաբերյալ զեկույցման մեջ Ն. Մտեփանյանն աղ մասին ասում է. «Գտնելով, որ մենք տմեսական տոսկալի վիճակի մեջ ենք և դրսից ոչ մի օգնություն չենք կարող ստանալ, Հեղկոմը որոշեց դիմել ամենախիտո թոնագրավման, որովեես միջոց չունենք: Մտեղծվեց թոնագրավման թաժին, և մենք ենարավորություն ունեցանք որոշ չափով թե՛ որրերի, զաղթականների և թե՛ խորերդային իշխանության ծառայողներ զոությունը պաշտպանել»<sup>24</sup>:

Բոնագրավումներ իրականացնելու էր եստույկ թաժինը, որն այնուեեստ թոնագրավված մթերքներն ու իրերը եավաստր թաժանելու էր չունեկորներին: Ասկայն թագմաթիվ փաստաթղթերից երևում էր, որ այն Հեղկոմի և նրան ենթարկվող իշխանության մարմինների երմնական զբաղմունքն էր, նրանց ապրելու միակ միջոցը: Բոնագրավումներ իրականացնում էին բոլոր կոմունիստները և մասնավորապես միլիցիան, որն իսկական պատուեսա էր դարձել թնակչության զլխին: Այն կատարում էր թագմաթիվ անօրեն խուզարկություններ, թոնագրավումներ, թանտարկություններ: Այս ամենը տևում է մոտ մեկ ամիս, որից եեստ

22. Տե՛ս, «Կոմունիստ», թիվ 32, Երևան, 1921թ., էջ 2:

23. Նույն տեղը:

24. Տե՛ս, ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ.3, ց.1, գ.3, թ.5:

անցնում են կազմակերպված թալանի: Բռնագրավման ռաժմի նախագահ նշանակված Ավեախի Ղազարյանը դիմում է Հեղկոմին՝ պահանջելով, որ այդ գործը եանձնվի միայն ռաժմին, որը ռոնագրավված իրերը կեանձներ համապատասխան կոմիսարիատին<sup>25</sup>: Քանի որ այս գործընթացն արդեն դարձել էր անկառավարելի, ներքին գործերի կոմիսարը 1920թ. դեկտեմբերի 28-ին ստիպված է լինում երամայել թուրք կոմիսարներին՝ դադարեցնել ինքնագլուխ ռոնագրավումները՝ այն եսմարելով միայն ռաժմի իրավունքը<sup>26</sup>: Բռնագրավման ռաժմը, փորձելով այս գործն իրակամացնել կազմակերպված ձևով, որոշում է ռոնագրավել Ալեքսանդրապոլից փախած թուրք դաշակցակազմների իրերն ամրոջովին, մնացածներից՝ միայն, ավելորդ ափսեները, գոլները, շապիկները, անկալիները և այլն: Այս մեթոդը հանգեցնում է նրան, որ փաստորեն ռոնագրավված իրերը կենարոնանում են առանձին մարդկանց ձեռքին: 1921թ. ապրիլի 9-ի Ալեքսանդրապոլի գավառային կուսկազմակերպությունների միատում ելույթ ունենալով՝ Ավ. Ղազարյանը այդ մասին ասում է. «Բուրք ռոնագրավված իրերը եանձնված են եղել համապատասխան կոմիսարիատներին, որոնցից, չնայած իմ ջանքերին, ոչ մի կերպ չի եաջողվել ստանալ պաշտոնական սասցականներ: Մերեները մնացել են պահեստներում»<sup>27</sup>:

Ֆինանսների կոմիսար Արայուշա Տեր-Սարախրոսյանը այս նույն կոնֆերանսում, արդարանալով իշխանությունից հեռանալուց հետո իր թաքնվելու համար, ասում է. «Երևակայեցեք մի մեշյան հասարակություն, որը ճանաչում է Արայուշային և զիտի, որ ֆինանսական մասը գտնվել է նրա ձեռքում, և դրանից եզրակացնում է, որ ռեկվիզիցիայի ենթարկված թուրք թանկագին իրերը պեաք է գանվեն ինձ մոտ: Իսկ ես քաղաքական պարտք չեմ եամարել այն, որ մասսային ցույց տալով լնկեր Արշակունու ստացականը՝ ասեմ, որ այդ ամենը ես եանձնել եմ ընկեր Արշակունում»<sup>28</sup>:

Ընդ որում, ռոնագրավումներն հաճախ կատարվում էին թուրքերի եեա միասին՝ նրանց թալանին աալով օրինական ընույթ: Թուրքերն եայտաըարում էին, թե ռոնագրավումները կատարում է Ալեքսանդրապոլի Հեղկոմը «եամաձայն մասնավոր անձանց պատկանող արժեքների ազգայնացաման կոմունիստական սկզբունքների»<sup>29</sup>:

Եռիշե Գալոյանն իր եուշեում գավառի կոմիսարի և թուրքերի համագործակցության եեակալ գործելակերպն է նշում. «Թուրք ասկյարները գավառի կոմիսարի հատուկ գրությամբ մանում են գյուղերը, որոնց ցուցակներում գրված էր լինում, ոթ եթե ցուցակով պահանջված անձինք չհանձնվեն ասկյարներին, ապա ասկյարները լիագործված են գյուղը թալանելու»<sup>30</sup>:

Հասկանշական է, որ եայերը երբեմն ավելի անգիջող էին, քան թուրքերը: Ալեքսանդրապոլի քաղաքի կոմիսարին ուղղված իր խնդրանքում Ալեքսանդրապոլի ընակչուեի Հայկանուշ Ներսիսյանը գրում է, որ նույնըրկր ամսին առաջին քաղաքամասի կոմիսարի օգնական Աթիրեկյանը, մի ասկյարի եեա մտնելով իր տունը, ռոնագրավել է իր ունեցած միակ գորգը՝ խոստանալով այն վերադարձնել, թայց սասցական չի տվել: Իր աղայանքներին ասկյարը զիջել է, թայց Աթիրեկյանը սախպել և աարի է: Բնականարար, այն չի վերադարձվել<sup>31</sup>:

Այսպիսով, ինչպեա եակաեեղափոխության դեմ պայքարով, այնպեա էլ ռոնագրավումներով Ալեքսանդրապոլի Հեղկոմը, կարծելով, թե նպաստում է եեղափոխության գարգացմանը, իրականում աջակցում է թուրքերի՝ եայ ընակչությանը կոտորելու և թալանելու քաղաքականությանը: Այս իրավիճակը շաա դիպուկ է ներկայացված Բաքվում Հայաստանի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչ Սարգսի և Հայաստանի Հեղկոմի անդամներ Սվիսի և Դովլաթովի միջև եեռախոսային խոսակցությունում, որտեղ Հայաստանի Հեղկոմի անդամները, նկարագրելով Հայաստանի ներքին վիճակը, Ալեքսանդրապոլի մասին ասում են հեակալը, «Ալեքսանդրապոլի Հեղկոմը գանվում է թուրքական հրամանաարության լիակաաթ գերության մեջ: Ամեն ինչ թուրք հրամանաարությունը դուրս է եանում նրանց միջոցով: Մեր ընկերների դրությունն այնաեղ չափագանց ծանր է: Հեղկոմի վերարերմուքը դեպի թուրք հրամանատարությունը կրում է մեծ մասամբ ազիհացիոն ընույթ, որպեալի թուրք հրամանաարությանը հնարավորություն

25. Տե՛ս, ՀՀ ՀԲԿԳ ԿՊԱ, ֆ.3, ց.1, գ.3, ք.5:

26. Տե՛ս, ՀՀ ՀԲԿԳ ԿՊԱ, ք.144, ց.1, գ.1, ք.8:

27. Տե՛ս, ՀՀ ՀԲԿԳ ԿՊԱ, ֆ.3, ց.1, գ.3, ք.5:

28. Տե՛ս, ՀՀ ՀԲԿԳ ԿՊԱ, ֆ.3, ց.1, գ.3, ք.5:

29. Տե՛ս, Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, Երևան, 1982թ., էջ 362:

30. Տե՛ս, ՀՀ ՀԲԿԳ ԿՊԱ, ֆ.4033, ց.14 գ.127, ք.22:

31. Տե՛ս, ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 144, ց.1, գ.23, ք.10:

չտա պրովակացիայի ենթարկել թուրք կոմիսարների աշխատանքը զինվորական մասսաների մեջ»<sup>32</sup>:

Քացահայտըն վարկարկելով Հեղկոմին՝ թուրքերը սկսում են սլայքարը մաւ նրա դեմ՝ փաստորեն Հեղկոմին հեռացնելով իշխանությունից: Քաղաքի կյանքի եսկողությունը իր ձեռքն է վերցնում թուրքական պարետը: Քաղաքի միլիցիան գրկվում է Հեղկոմի կարգադրությունները կատարելու իրավունքից: Կոմունիստները գնդակահարվում են զիշերները: Հարձակումներ են սկսվում Հեղկոմի անդամների վրա: Թուրքերը կտրում են Հեղկոմի կապը գյուղերի հետ՝ շրոկնելով մտնել այնտեղ: Կտրվում է կապը մաւ դրսի աշխարհի հետ: Հսկողության տակ են առնվում հեռագրական կապը Ղարաքիլիսայի և Երևանի հետ: Ուղարկվող և ստացվող թուրք հեռագրերը առուգվում են թուրք եսկիշների կողմից: Հեղկոմը սսփալված է լինում իր հեռագրերը Երևան ուղարկել ընդհատակյա ստորեմղակների միջոցով: Այդպիսի հեռագրերից մեկում կարդում ենք. «... Պատրաստվում են իսկական ռեսրեսիաներ մեր դեմ: Որոշ արժանահավատ տեղեկությունների համաձայն՝ մրանք մպատակադրվել են մեզ ձերակալել որպես կողոպտիշների, մարդասպանների և եասարակության համար վտանգավոր տարրերի»<sup>33</sup>:

Հունվարի 21-ից Ալեքսանդրատրում թուրքական երամանատարության կողմից սկսվում է քաղաքի մասսայական և ռացարձակ կողոպտուտը: Հեղկոմին թողնելով խաղից դուրս՝ թուրքերը սկսում են կալոպտել մրա կողոպտածը: Թալանում են Հեղկոմի անդամների բնակարանները, պահեստները: Հայտնվելով անելանելի վիճակի մեջ՝ Ալեքսանդրատրի Հեղկոմն իր հեռագրերով խնդրում է Հայհեղկոմից ուղղության տալ՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար<sup>34</sup>: Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը, տեղում իրադրությանը ծանոթանալու համար, ուղարկում է պասասխանատու ընկերներից քաղկացած եամձնաժողով: Հայաստանի ոսգմահեղափոխական կոմիտեն, 1921թ. եունվարի 23-ին բնմարկելով եամձնաժողովի գեկուցումը, գտնում է, որ «Ալեքսանդրատրի Հեղկոմը թուրքական ակուպացիայի պայմաններում, թուրքական երտմանատարության ճնշմամբ վեր է ածվել խաղալիքի, թուլ է ալել բազմաթիվ սխալներ, որոնք վերկարեկում են կոմունիստական կուսակցությանը և խորերդային իշխանությանը և Հեղկոմի հետագա գոյությունը Ալեքսանդրատրում քաղաքական տեսակետից անհանդուրժելի և վնասակար համարելով՝ որոշում է ետ կանչել Ալեքատրի Հեղկոմին և մրա անունից եատուկ ղեկարացիա հրապարակել իշխանությունից իր երաժարականի մասին»<sup>35</sup>:

Հունվարի 25-ին ՀԿԿ Կենտկոմի և Հայաստանի Հեղկոմի դիրեկտիվների համաձայն՝ Ալեքսանդրատրի Հեղկոմն իր վերջին միստում որոշում է իշխանությունից երաժարվել և այդ մասին դիմում է ուղարկում Հայաստանի ու Ադրբեջանի Հեղկոմներին, ՌԽՖՍՀ ժողկոմխորերդին, կոմունիստական 3-րդ Ինտերմացիոնալի գործադիր կոմիտեին: Այդ դիմումում թվարկվում են թուրքական ակուպացիոն ոսգմական իշխանությանը կողմից Ալեքսանդրատրի գավառին և քաղաքին պատճառած վնասները, թալանի և սպանությունների շարանը՝ ապացուցելով, որ Ալեքսանդրատրի Հեղկոմի իշխանությունը ֆիկցիա է, որը վարկարեկում է խորերդային իշխանության գաղափարը<sup>36</sup>:

Մրան հետևում է եունվարի 27-ի խորերդային միլիցիայի կազմալուծման և քաղաքային միլիցիայի ստեղծման մասին որոշումը<sup>37</sup>: 1921թ. փետրվարի 1-ին Արշակունու և Գրիգորյանի հեա ռանակցելով՝ միլիցիայի մախկին պետ Մուսիմյանը որոշում է ընդունում քաղաքի միլիցիայի ստեղծման մասին, որի մալասակն էթ պահպանել կարգ ու կանոնը քաղաքում և պաշտպանել ընակիշներին՝ առանց կուսակցական և ազգային տարրերությունների<sup>38</sup>: Ալեքսանդրատրի գավառային միլիցիայի պետ Սատիմյանի թիվ 1 երամանով արգելում է դիպչել որևէ մեկի շահերին կամ հեասայնդել որևէ մեկին իր սեփական եայեցողությամբ: Արգելվում է անձնավորություններին վիրավորել, ինչպես գործությունը, սլյնպես էլ խոսքով<sup>39</sup>:

32. Տե՛ս, ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.3, գ.188, ք.2:

33. Տե՛ս, ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց.2, գ.33, ք.1:

34. Տե՛ս, ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց.2, գ.33, ք.16:

35. Տե՛ս, Մ. Ալիխանյան, ճշված աշխ. էջ 351:

36. Տե՛ս, ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց.2, գ.33, ք.55-57:

37. Տե՛ս, ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.1204, ք.1:

38. Նույն տեղը, ք. 3:

39. Տե՛ս, ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.2, գ.1204, ք.2:



Սրանով փաստորեն խորհրդային իշխանությունն Ալեքսանդրապոլում լուծարվեց: Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանությունն եռչակելու միջոցով բուրքական օկուպացիոն ուժերը մեղմացնելու թուլակից քաղաքականությունը սնանկ դուրս եկավ: Խորհրդային իշխանության մալմիները սաեղծվեցին և գործեցին ողբանով, որ դա աներաժեշտ եղավ բուրքերին՝ եայ ընակչության թալանն ու կոտորածը օրինականացնելու եամար:

Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ բուրքերը այլ նպատակ, քան եայոց պետության ու ժողովրդի ոչնչացումը, չունեին: Եվ այդ նպատակին եամնելու եամար պատրաստ էին դաշնակցել թեկուզ սատանայի եեա, օգտագործել թուրք ենարավոր միջոցները, ամենափոքր ենաընափորությունն անգամ: Տվյալ դեպքում օգտագործելով Հայաստանի խորհրդայնացման խաղաքարտը ոչ միայն ոչնչացվեց եայկական անկախ պետությունը, գրափիլեց նրա տարածքները, այլև ամբողջովին թալանվեց Ալեքսանդրապոլի գավառը և կոտորվեց ընակչության մեծ մասը:

## ДЕЯТЕЛЬНОСТЬ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО БОЛЬШЕВИСТСКОГО РЕВКОМА В НОЯБРЕ 1920-ПО ЯНВАРЬ 1921 ГОДА.

РЕЗЮМЕ

К. АЛЕКСАНЯН

*Турецко-армянская война 1920 года - одна из трагических страниц новейшей армянской истории. Эта война имела исключительно тяжелые последствия для жителей Александропольского уезда, который шесть месяцев жил в условиях турецкой оккупации. Турецкая политика уничтожения армян любой ценой была дополнена действиями большевиков, которые под предлогом борьбы с контрреволюцией также подвергали население притеснениям и конфискации имущества.*

*Отказ правительства Республики Армения от предложений о советизации Армении и неспособность остановить турецкое продвижение привели к тому, что Ревком Александрополя вынужденный условиями, с согласия турок, провозгласил здесь советскую власть, стремясь таким образом спасти население. Но при этом они сами стали орудием ограбления и истребления родного народа. Все их действия по укреплению советской власти способствовали реализации турецких планов. Большевики призывали население не поддаваться панике и не покидать город, представляя вести о зверствах турок как провокации, а самих турок - как спасателей от дашнаков. За этим последовало создание Ревкома и органов советской власти в городе и уезде. Однако деятельность этих органов была ограничена теми направлениями, в которых были заинтересованы турки, желавшие придать законность грабегам и насилию. При этом особую роль сыграли Чрезвычайная комиссия (ЧК) и Отдел конфискации городского Ревкома. Когда, осознав свою постыдную роль, большевики отказались от власти, они также подверглись преследованиям со стороны турок, что вновь подтверждает турецкие намерения в отношении советской власти.*

*Политика большевиков по использованию советской власти для смягчения оккупационного турецкого режима оказалась несостоятельной. Турция использовала советизацию Армении как игральную карту, с помощью которой погубила независимое армянское государство, захватила его территории, и при этом полностью ограбила Александропольский уезд и истребила большую часть населения.*